կարճ՝ նա վարում է Հայաստանեան քաղաքականութիւն, որովհետեւ նրա խարիսխը Հայաստանեան է, որովհետեւ ինքն էլ դերադանցօրէն Հայաստանեան կուսակցութիւն է: Այդպէս չէ Ռամկավար կուսակցութիւնը: Լաւագոյն դէպքում նա իսկապէս դաղութահայ մի հոսանք է, մի ուղղութիւն, եւ ոչ իսկ կուսակցութիւն, որովհետեւ չունի եւ ի վիճակի էլ չէ ունենալու երկրային քաղաքականութիւն: Իր հետեւողներն էլ բացառապէս դաղութածին հայեր են, մեծ մասով մինչեւ իսկ Հայաստանի երեսը չտեսած մարդիկ:

Ոչ պակաս կարեւորութիւն ունի եւ այն պարագան, որ մինչ Հ. Յ. Դաշնակցութեան ազդային քաղաքականութեան համար Հայաստանը ինքնանպատակ է, համայնավարների եւ նրանց յետեւից դնացող տարրերի համար նա փաստօրէն միջոց է տարբեր նպատակների համար: Եթէ պէտք լինի, օրինակ, «համաշխարհային յեղափոխութեան» համար զոհ բերել Հայաստանը, այդ կ՝անեն նրանք: Եւ մէկից աւելի ապացոյցներ էլ տուել են այդ ուղղութեամբ: Եւ դա նրա համար, որ նրանց գլխաւոր եւ գրեթէ միակ յենարանը արտաքին, օտար ոյժերն են:

Մարդիկ, որ օրն ի բուն քննադատում են Հ. Յ. Դաշնակցութիւնը այն պատճառով եւս, որ սա յաճախ «գործիք» է դարձել աշխարհակալ դիւանագիտութեան ձեռքին, նոյն այդ մարդիկ այսօր կամովին եւ կուրօրէն ինքզինքին եւ իրենց վարած երկիրը ամբողջովին տրամադրել եւ ստորադրել են մի օտար, խորթ դիւանագիտութեան եւ ծրագիրների: Մարդիկ, որոնք չեն քաշւում օրն ի բուն անդուն բերանով խարանելու սեփական ժողովրդի ազատագրութիւնը հետապնդող պայքարը անցեալում, աշխարհակալական եւ արկածախնդրական որակելով այն, ելեր են այսօր ու հրաւէր են կարդում մեր կոտորակուած բազմութիւններին՝ Սիբիրայի դաշտերում արիւն վոթելու մի օտար դատի համար:

Ինչո՞ւ ծածկել: Հայ ազատագրական շարժումը իր մանկութեան օրերին բազմիցս է սայթաքել, յաճախ է նա գործիք ծառայեցուել օտար ոյժերի ձեռքին, օտար նպատակների համար: Բայց այդ սխալները միշտ էլ առաջացել են անփորձութիւնից, կատարուել են սեփական դատին ծառայելու, թէեւ յաճախ միամիտ, այլ սրբազան հաւատքով, վերջապէս՝ անգիտակցաբար: Եւ մեզ այդ ամենի մէջ մեղադրողները նոյնը եւ շատ աւելին անում են այսօր գիտակցաբար, այն եւս այսքա՜ն տարիների փորձերից եւ փորձանքներից յետոյ:

Ահա թէ ինչու նման քայլերը կրում են ոչ թէ քաղաքական սխալների բնոյթ, այլ պարզապէս հանդիսանում են քաղաքական յանցանքներ եւ ոճիրներ:

Այստեղ մենք չենք խօսում դաղութահայ կեանքի ուրիշ երեւոյթների մասին — մշակոյթ, դրականութիւն, մամուլ, կազմակերպութիւններ եւայլն — որոնք անշուշտ կարեւոր գործոններ են ինքնին: Եւ սակայն այդ ամէնը քաղաքական հոսանքների միջոցով, նրանց խողովակով է միայն, որ կարող է — միշտ էլ օժանդակի դերում — սպաս դրուել ազդային քաղաքականութեան ընդհանուր նպատակներին:

Արտաքին, օտար ազդակներին եւս բնականաբար կողմնակի դեր միայն վերապահել կարելի է ազդային քաղաքականութեան խնդրում: Անգիտակից, ինքնուրոյն կեանքի պահանջ չունեցող ժողովուրդների համար արտաքին ամենաբարենպա՛ստ պայմաններն անգամ ի զուր չեն՝ քաղաքական կեանք ներշնչելու: Լաւագոյն դէպքում՝ սոսկ օտար ոյժերի ձեռքով ի կեանս կոչուած պետական միաւորները, անգամ եթէ գոյութեան իրաւունք է վիճակուած նրանց, նոյն այդ ոյժերին մշտապէս ծառայելո՛ւ են դատապարտուած:

XIII

Եւ այսպէս, հայ ազդային քաղաքականութեան դերագոյն առարկան Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանն է, նրա առաջ-մղիչ ոյժը՝ Հայաստանի ժողովուրդը, իսկ օժանդակ ազդակները՝ դաղութահայ հատուածները եւ արտաքին նպաստաւոր պայմանները:

Եւ սակայն արտաքին ազդակները կարող են որչափ նպաստաւոր, այնչափ էլ աննպաստ դասաւորուել մեզ համար: Դրա բազմաթիւ փորձերը ունինք արդէն: Ազդային քաղաքականութեան հիմնական խնդիրներից մէկը պի-